«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Առարկան՝ աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ *Անուշ Դավթյան*

Ուսումնական հաստատություն՝ *ՀՀ Լոռու մարզի Հաղպատի միջնակարգ դպրոց*

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 2

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը աշխարհագրության ուսուցման գործընթացում---------- 6

Եզրակացություններ---------21

Օգտագործված գրականության ցանկ---------- 22

Ներածություն

Քննադատական մտածողության ամենավաղ դիտարկումները հանդիպում են Սոկրատեսի ուսմունքներում, որոնք արձանագրվել են Պլատոնի կողմից: Նա կարևորում էր խորը հարցադրումների կատարումը, որոնք հետազոտողը պետք է իրականացնի՝ նախքան վերջնական եզրահանգումները:

Սոկրատեսը պնդում էր, որ անձը կարող է ունենալ բարձր դիրք, իշխանություն, բայց և ունենալ խորապես սխալ, ոչ ռացիոնալ մտածողություն: Սոկրատեսը շեշտում էր ապացույցներ փնտրելու, հիմնավոր պատճառաբանություններ և ենթադրություններ կատարելու, հիմնական հասկացությունները վերլուծելու գործընթացի կարևորությունը:

Քննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկույթի հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները:

<u>Թեմայի արդիականությունը՝</u>

- Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից մեկը:Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն իֆորմացիային տիրապետելը, այլև արժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը:

- Դեռևս անցած դարի 70-80-ական թվականներին արևմտյան երկրներում և ԱՄՆ-ում սկսեցին լրջորեն քննադատել կրթության նպատակներն ու բովանդակության ձևավորման մոտեցումները: Ամերիկյան հետազոտողները պարզեցին, որ շատ հաճախ մարդկանց ինտելեկտի բարձր աստիճանը չէին երաշխավորում նրանց մասնագիտական հաջող գործունեությունը:

IQ թեստը տալիս էր բարձր արդյունք, մինչդեռ իրական կյանքում մարդը ցածր արդյունավետությամբ էր աշխատում: Ամերիկացի հետազոտողները կատարեցին բարձր արդյունավետության հասած մարդկանց վարքի, գործունեության ուսումնասիրություններ և արդյունքում ձևակերպեցին նրանց ընդհանրությունները միավորող որակների համալիր խումբ, որն անվանեցին կոմպետենցիա: Պարզ դարձավ, որ հանրակրթությունը պետք է ձևավորի այնպիսի կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր անհատի արագ փոփոխվող հասարակությունում հաջողությամբ կազմակերպելու իր առօրյա կյանքն ու գործունեությունը:

- Չնայած այս հարցում միասնական մոտեցումը բացակայում է, սակայն մի բան հստակ է՝ առանձին առարկաների բովանդակության վրա կառուցված կրթական մոդելն իր դիրքերն արագորեն զիջում է առանցքային կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելին: Բոլորի համար պարտադիր պահանջների շարքում նեղառարկայական գիտելիքներից և գործնականում դրանք կիրառելու կարողություններից բացի, որոշիչ դեր են սկսում խաղալ համապիտանի կարողունակությունները, որոնք աստիճանաբար դառնում են համընդհանուր գրագիտության պարտադիր բաղադրատարրեր: Համաձայն Համաշխարհային տնտեսական ֆորումի վերջերս հրապարակված տվյալների՝ քննադատական մտածողությունը երկրորդն է այն 10 կարեւորագույն ունակություններից, որոնք անհրաժեշտ են մարդուն լավագույն աշխատանքը գտնելու համար առաջիկա տարիներին:
- Հանրակրթության պետական նոր չափորոշիչի հիմքում ևս ընկած է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը:Առանցքային ութ կարողունակությունների մշակվել են՝ հիմքում ունենալով 21-րդ դարի հմտությունները, որոնց մեջ շատ կարևոր է քննադատական մտածողության դերը:

- Քննադատական մտածողությունը նպաստող հմտությունների զարգացումը կարևորում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդական արժեքների պահպանման տեսանկյունից: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները:

- Քննադատական մտածողությունը կարեւորագույն նշանակությունն ունի նաեւ մարդկանց հետ լավ հարաբերություններ հաստատելու, ատելությունից զերծ մնալու եւ ներդաշնակ կյանքով ապրելու համար:

- Քննադատական մտածողությունը պետք է զարգացնել դեռ վաղ մանկությունից, քանի որ մեծահասակ տարիքում մարդու մտածելակերպի փոփոխումը ծայրաստիճան դժվար է:

- Քննադատաբար մտածելու և վերլուծելու ունակությունը ձևավորվում է սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների(այդ թվում աշխարհագրության) ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով :

<u>Հետազոտության նպատակը՝</u>

Հետազոտության նպատակը դպրոցներում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունների բացահայտումն ու հիմնավորումն է՝ որպես սովորողների առանցքային կարողունակությունների զարգացմանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիա:

Հետազոտության խնդիրները՝

- Հիմնավորել սովորողների քննադատական մտածողության զարգացման կարևորությունը:

- Ուսումնասիրել դասավանդման միջոցով սովորողի մտածողության հմտությունների զարգացման հնարավորությունները առհասարակ, և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները

- Վերլուծել քննադատական մտածողության զարգացմանը նպաստող միջավայրի պայմանները:
- Ներկայացնել քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները աշխարհագրության ուսուցման գործընթացում:

Հետազոտության մեթոդաբանությունը՝

Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- Ուսումնասիրվել,վերլուծվել և ընդհանրացվել են մանկավարժական գործընթացում տարբեր տեխնոլոգիաների կիրառման,մասնավորապես քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման վերաբերյալ գիտական մոտեցումներն ու մանկավարժական առաջավոր փորձի վերաբերյալ աշխատությունները:

- Վերլուծվել են ՀՀ ում կրթական ոլորտի օրենսդրությամբ սահմանված պահանջները:
- Անդրադարձ է կատարվել սեփական մանկավարժական փորձին:

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը աշխարհագրության ուսուցման գործընթացում

Սովորողների քննադատական մտածողության զարգացման կարևորությունը:

Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ' աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են' պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ: Արդի ժամանակաշրջանը՝ իր գիտակրթական տեղաշարժերով ու զարգացումներով, նոր առաջնահերթություններ է թելադրում կրթական գործընթացում: Դպրոցի գերակա խնդիրն է աշակերտներին ոչ թե պատրաստի գիտելիք փոխանցել, այլ սովորեցնել մտածել, տեղեկույթը վերլուծել, քննարկել, իր կարծիքը հիմնավորել, հարցադրումներ անել, բանավիճել, քննադատաբար վերաբերվել այն ամենին, ինչ կարդում են, լսում տեղեկատվական հեղեղի արդի պայմաններում: Այսօր երիտասարդներից, ավելի քան երբևէ, պահանջվում է բարդ խնդիրներ լուծելու, հանգամանքները քննախույզ դիտարկելու, այլընտրանքային կարծիքները քննելու և լրջմիտ ու խելացի որոշումներ կայացնելու կարողություն: Սա արդեն իսկ քննադատական մտածողություն է:

Այսպիսով արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասսիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ:

Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժությանկողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռք բերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում:

Ուսուցման գործընթացի կատարելագործմանը, սովորողների ակտիվացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստող մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունեցող քննադատական մտածողության տեխնոլոգիան: Այն առավել հայտնի է «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի շրջանակներում:Կարևոր է նաև կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում քննադատական մտածողությանը վերաբերող պահանջները:

«Քննադատական մտածողություն» եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է «քննադատել» բառին: Սակայն այս բառը ներառում է «քննել» և «դատել» բառ-հասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուն ներից, ապա դատել և եզրահանգում կատարել:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սովորողների ստեղծագործական մտածողությունը:

Քննադատական մտածողությունը բարդացված մտածելակերպ է,բայց այն կարելի է զարգացնել նաև ցածր տարիքային խմբում:Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում: Սա բավականին սխալ պատկերացում է:

Դասավանդման միջոցով սովորողի մտածողության հմտությունների զարգացման հնարավորությունները առհասարակ, և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները:

Երբ աշակերտներին քննադատաբար մտածել սովորեցնելը խիստ էական է , ապա դա պետք է համակարգված ձևով ներմուծվի դասավանդման գործելակերպի համատեքստի մեջ: Չի կարելի ենթադրել, որ աշակերտներն արդյունավետ քննադատական մտածողության կհասնեն ինքնաբերաբար կամ, պարզապես, որովհետև այն հռչակվել է կարևոր մի բան: Բավական չէ նաև քննադատական մտածողությունը դարձնել ուսումնական ծրագրի մի մասը: քննադատական մտածողությունը չի կարող ձևավորվել «քննադատական մտածողության յոթ քայլ»-ը սովորեցնելու կամ որևէ այլ դեղատոմսի միջոցով: Արդյունավետ և քննադատաբար մտածող դառնալու համար աշակերտները պետք է քննադատական մտածողության իրական փորձառություն ունենան: Տարածված սխալներից է այն պատկերացումը, որ քննադատական մտածողությունն ուսուցանվող «առարկա» է, կամ հմտությունների մի խումբ է, որը պետք է, պարզապես, մտապահել: Քննադատական մտածողությունը արդյունք է: Դա մտածողության այն ձևն է , որի շնորհիվ մարդը գաղափարների կամ ինֆորմացիայի հետ փոխգործության մեջ մտնելով, բնականորեն, ինքնին մտածում է քննադատաբար (քննելով և դատելով) : Սա ակտիվ գործընթաց է , որը դիտավորյալ խթանվում է կամ ինքնաբուխ ի հայտ է գալիս և որը սովորողին ընձեռում է ինֆորմացիան տնօրինողի կայուն դեր, այսինքն՝ սովորողը կարողանում է ինֆորմացիան քննության ենթարկել, յուրացնել, ձևափոխել, հարմարեցնել կամ ժխտել:

Քննադատական մտածողությունը լավ չի յուրացվում ուսումնական ծրագրի կամ առօրյա կյանքի համատեքստից դուրս: Դպրոցում քննադատաբար մտածելու լավագույն ձևը այդ մտածողությունը կիրառելն է որպես որևէ գաղափարի մոտենալու եղանակ, որպես ամենօրյա ուսումնական ծրագրի մաս և ակնկալվող արդյունք: Քննադատական մտածողությանը և սովորելու գործընթացին վերաբերող վերջին գիտական հետազոտությունները ցույց են տվել, որ հմտությունների տարանջատ ուսուցումը և փաստերի յուրացումը հիմնախնդիր համարող մոդելը նվազեցնում է աշակերտի քննադատական մտածողությունը:

Բրաունը (1989) պնդում է, որ իրական կյանքի խնդիրներից և նպատակներից կտրված հմտություններ սովորելը կարող է աշակերտներին հնարավորություն տալ հաջողության հասնել որևէ առարկայի քննության ժամանակ, սակայն նրանք ի զորու չեն լինի այդ հմտությունները կիրառել նոր ու անսպասելի իրավիճակներում: 17-րդ դարում ֆրանսիացի փիլիսոփա Ռենե Դեկարտը «Խորհրդածություններ մեթոդի մասին» աշխատության մեջ նկարագրում է արմատական կասկածի մեթոդը, որի հիմքում ընկած էր «թերահավատությունը», «կասկածն ամեն ինչի նկատմամբ»: Դեկարտին է պատկանում նաև հայտնի թեզը՝ «Ես մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ»: «Քննադատական մտածողության» սկզբունքի հիմնադիրներից է համարվում 20-րդ դարասկզբի ամերիկացի փիլիսոփա և ուսուցիչ Ջոն Դյուին: Իր հետազոտությունների մեջ Դյուին նկարագրել է մեթոդներն ու գործիքները, որոնք թույլ են տալիս մարդուն բազմաբնույթ խնդիրներ լուծել: Նա օգտագործել է «հետազոտություն» հասկացությունը (անգլ. *inquiry*) նկարագրելու անհասկանալի խնդրահարույց իրավիճակը լավ մտածված և, հետևաբար, լուծելի խնդիր դարձնելուն ուղղված գործողությունների ամբողջությունը: Այստեղ պետք է մի քանի հաջորդական քայլեր անել. ձևակերպել խնդիրը (այսինքն՝ դժվարության էությունը), առաջ քաշել վարկածներ և ստուգել դրանք սեփական գործողությամբ:Ջոն Դյուիի հետ են կապվում այժմ նոր չափորոշչով խրախուսվող ուսումնական նախագծային աշխատանքի տեսական հիմքերը:Իսկ նախագծային ուսումնառության մեթոդը ինքնին քննադատական մտածողությունը խթանող գործիք է: Սուխոմլինսկին սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է համարել: Ռոբերտ Յանգը (Robert 10 Young) նշում է, որ քննադատական մտածողությունը ենթադրում է իմացական հմտությունների (cognitive skills) և ռազմավարությունների կիրառում, որը կմեծացնի ցանկալի արդյունքին հասնելու հավանականությունը: Ըստ նրա քննադատական մտածողությունը նպատակասլաց, պատճառաբանված, նպատակի իրագործմանն ուղղված մտածողություն է: Յանգը նաև նշում է, որ խնդրիների լուծման, հիմնավորված ենթադրությունների կառուցման, հավանականությունների հաշվարկման և որոշումների կայացման հիմքում պետք է ընկած լինի քննադատական մտածողությունը (Young, 1980):

Գրեթե բոլոր ականավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական մտածողության ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Երբ ուսանողն ակտիվորեն մասնակցում է ուսումնառության գործընթացին, նա ակամա սկսում է մտածել խնդրի շուրջ, դասախոսից բացի լսում է իր համակուրսեցիների կարծիքը և տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը բարձրաձայնված կարծիքների վերաբերյալ, ինչպես նաև կարող է ներկայացնել ամբողջովին տարբերվող տեսակետ, որը նույպես պետք է պատճառաբանված լինի, քանզի լսարանն ընդհանրապես ճնշում է գործադրում անհիմն կարծիքների վրա:

Դասավանդման ընթացքում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն իրականացվում է ըստ հստակ սահմանված փուլերի՝ խթանում, իմաստավորում և կշռադատում /ԽԻԿ համակարգ/:Հենց քննադատական մտածողության զարգացման նպատակով է նաև ստեղծվել ԽԻԿ համակարգը: Այս համակարգն ուղղված է սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը, որի շնորհիվ խթանվում ու վեր են հանվում սովորողների ունեցած գիտելիքները, իմաստավորվում և կշռադատվում է ուսուցանվող նյութը՝ վերլուծության, համադրության, համեմատությունների ու եզրահանգումների միջոցով: Քննադատական մտածողության տեխնոլոգիան հանդես է գալիս որոշակի մեթոդախմբով, ընդ որում յուրաքանչյուր մեթոդ կիրառվում է ԽԻԿ համակարգի կոնկրետ փուլում՝ ելնելով տվյալ մեթոդի նպատակներից: Օրինակ՝ մտավոր գրոհ մեթոդը կիրառելի է խթանման փուլում, իսկ հինգ բոպեանոց շարադրանքի մեթոդը կամ Վեննի դիագրամ մեթոդը ավելի նպատակահարմար է կիրառել կշռադատման փուլում և այլն:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդները կարելի է խմբավորել հետևյալ ձևով՝

- գիտելիքների համակարգ ձևավորող մեթոդներ՝ մտավոր գրոհ, փոխգործուն նշաններ, խմբավորում և այլն:

• ճանաչողական կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներ՝ Վեննի դիագրամ, խորանարդում, քառաբաժան, պրիզմա, մանրապատում /կմախք/ և այլն:

• հաղորդակցական կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներ՝ հարցադրումներով ուղղորդված ընթերցանություն, «Հաստ» և «բարակ» հարցեր և այլն:

• համագործակցային կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներ՝ ջիգսո /խճանկար/, շրջանաձև շարադրանք և այլն:

• ստեղծագործական կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներ՝ հնգյակ, բանալի բառեր, աքրոստիկոս և այլն:

• ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներ՝ ինքնագնահատման աղյուսակ /ԳՈՒՍ/, երկու աստղ և մեկ ցանկություն և այլն:

• արժեքային համակարգ ձևավորող մեթոդներ՝ ռուբրիկ, հեղինակի աթոռ մեթոդները և այլն:

Իրականացված խմբավորումը պայմանական է, քանի որ քննադատական մտածողության տեխնոլոգիայի որոշ մեթոդներ կարելի է միաժամանակ դիտարկել մի քանի տեսանկյունից: Մեթոդները խմբավորվել են՝ ելնելով դրանց առաջնային նպատակներից:

<u>Քննադատական մտածողության զարգացմանը նպաստող միջավայրի պայմանները:</u>

Քննադատական մտածողության զարգացմանը միտված դասավանդումը ենթադրում է սովորեցնել մտածել:Քննադատական մտածողության համար ինֆորմացիայի ընկալումը ավելի շուտ ուսումնական գործընթացի սկիզբն է,քան վերջնակետը:Քննադատաբար մտածելը ենթադրում է ընկալել գաղափարները և ապա սկսել խորհել դրանց նշանակության մասին,վիճարկել դրանք,դիտարկել տարբեր տեսանկյուններից:Այս առումով կարևոր է դասավանդող ուսուցչի՝սովորողների քննադատական մտածողությունը զարգացնելու կարողությունները:

Քննադատական մտածողության զարգացման համար միջավայրը նպաստավոր է,եթե սովորողները՝

- սովորում են լսել այլ կարծիքներ
- ունենում են մտածելու ժամանակ
- լինում են ակտիվ ներգրավված
- զարգացնում են ինքնավստահությունը
- կարողանում են տարբեր խնդիրներ լուծել
- զարգացնում են բարձր կարգի մտածողությունը (ըստ Բլումի տաքսոնոմիայի)

<u>Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները աշխարհագրության ուսուցման գործընթացում:</u>

Աշխարհագրության առարկայական չափորոշիչը ներառում է առարկայի ուսուցման նպատակը՝ըստ կրթական աստիճանների,որտեղ ի թիվս այլ պահանջների որպես առարկայի ուսուցման նպատակ ամրագրված է տարբեր աշխարհագրական երևույթների առանձնահատկությունների և օրինաչափությունների վերաբերյալ համակարգված քննադատական մտածողության ձևավորումը և զարգացումը:

Օրենսդրական պահանջից բացի աշխարհագրությունը ինքնին այնպիսին է իր բնույթով,որ լայն հնարավորություններ է տալիս ուսուցչին ուսուցման ժամանակակից մեթոդներ,այդ թվում քննադատական մտածողությունը զարգացնող մեթոդներ կիրառելու դասավանդման ընթացքում:

Այսպիսի եզրակացության եմ եկել նաև դասավանդման իմ 17-ամյա փորձին անդրադարձ կատարելով:Վերը թվարկված դասավանդման ինտերակտիվ տարբեր մեթոդները,որոնք օգտագործվում են դասերի վարման ԽԻԿ համակարգում,նախագծային աշխատանքները որպես մեթոդ,գործնական և այլ առաջադրանքները, բոլորը կիրառելի են աշխարհագրության դասերին: Ավելին՝ քննադատական մտածողության զարգացմանը միտված դասավանդման մեթոդներ կիրառելիս աշխարհագրությունը ավելի հետաքրքիր և կիրառական է դառնում աշակերտների համար,նպաստում է նաև նրանց աշխարհագրական մտածողության զարգացմանը:

Սովորողների քննադատական մտածողությունը զարգացնելու համար աշարհագրության ուսուցիչը պետք է՝

- Աշակերտներին հնարավորության և ժամանակ տա մտածելու՝նեղառարկայական գիտելիքների ու հմտությունների ուսուցումից բացի:
- Ունենա մասնագիտական պատրաստվածություն և աշխարհագրության դասերին կիրառի դասավանդման ժամանակակից բազմազան մեթոդներ՝դասի նպատակներին և փուլերին(ԽԻԿ) համապատասխան:
- Լինի բաց տարբեր գաղափարների և կարծիքների համար,խրախուսի աշակերտներին համագործակցել,լսել այլ կարծիքներ,որոնք կարող են և չհամընկնել սեփական դիրքորոշման հետ:
- Կարողանա խթանել սովորողներ ակտիվ մասնակցությունը,զարգացնել նրանց ինքնավստահությունը՝այդ նպատակին համապատասխան մեթոդներ ընտրելով,ինչպես նաև նպաստավոր միջավայր ստեղծելով:
- Հավատ ունենա յուրաքանչյուր աշակերտի քննադատաբար մտածելու կարողության նկատմամբ և խրախուսի քննադատական մտածողությունը:
- Սովորեցնել աշակերտներին պատրաստ լինել և ձևակերպել, և հարկ եղած դեպքում նաև կասեցնել սեփական դատողությունները:
- Կարողանա աշակերտներին տալ իմացության տարբեր մակարդակների,այդ թվում բարձր կարգի մտածողություն պահանջող(ըստ Բլումի աստիճանակարգության) հարցեր:
- Կարողանա տալ հարցեր,որոնք չունեն միակ ճիշտ պատասխան:
- Կարողանա հաշվի առնել սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Եզրակացություններ

1. Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ: Քննադատական մտածողության զարգացմանը միտված դասավանդումը ենթադրում է սովորեցնել մտածել:
2. Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել քննադատական մտածողության հմտություններ:

3. Սովորողների քննադատական մտածողության զարգացումը արդի հասարակական պահանջ է և հետևաբար ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես կրթության կարևոր խնդիր:
4. Քննադատական մտածողությունը նպաստում է սովորողների առանցքային կարողունակությունների զարգացմանը,որոնք սահմանված են հանրակրթության պետական չափորոշչով:
5. Քննադատական մտածողության զարգացումը կարևորվում է հանրակրթության բոլոր աստիճաններում, ընդսմին յուրաքանչյուր աստիճանում ունի իր խնդիրները, բովանդակությունը, մեթոդները, միջոցները, տեխնոլոգիաները, աշխատանքի կազմակերպման ձևերը:

6. Քննադատական մտածողության զարգացման համար շատ կարևոր է նպաստավոր միջավայրի ստեղծումը:

7. Աշխարհագրությունը իր բնույթով լայն հնարավորություններ է տալիս ուսուցչին ուսուցման ժամանակակից մեթոդներ,այդ թվում քննադատական մտածողությունը զարգացնող մեթոդներ կիրառելու դասավանդման ընթացքում:

Օգտագործված գրականության ցանկ

Գիտամեթոդական հանդես նախաշավիղ 2. 2001, 2. 2006, 5-6. 2004

https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 Հանրակրթության պետական չափորոշիչ

https://hy.wikipedia.org/wiki/Քննադատական_մտածողություն

https://aspu.am/website/images/files/Harutyunyan%20Gayane.pdf Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողունակությունների զարգացման միջոց արդի դպրոցում(ատենախոսություն)

https://artsakhlib.am/wp-content/uploads/2020/06/Գրետա-Հակոբյան-Ավագ-դպրոցականների-քննադատական-մտածողության.pdf

https://shsu.am/media/journal/2019n1b/6.pdf_Աշակերտների քննադատական մտածողության զարգացումը պատմության դասավանդման ընթացքում (հոդված գիտական տեղեկագրում)